ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Հովհաննիսյան

**ԿԱՐԾԻՔ**

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**Պետրոսյան Վերոնիկա Արտաշեսի՝ «Մարդու վերարտադրողական իրավունքների իրացման միջազգային իրավական գործիքների և մեխանիզմների հիմնախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.06 – Միջազգային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է մարդու վերարտադրողական իրավունքների միջազգային-իրավական կարգավորման ուսումնասիրությանը: Հեղինակը, ըստ էության, փորձ է կատարել մշակել այնպիսի գիտական աշխատանք, որը կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ առաջին համապարփակ իրավական հետազոտությունը:

Այս ատենախոսության **արդիականությունը** կասկած չի հարուցում, պայմանավորված վերարտադրողական իրավունքների՝ որպես մարդու հիմնարար իրավունքների միջազգային իրավական կարգավորմանն ամբողջությամբ նվիրված որևէ հետազոտության բացակայությամբ: Վերարտադրողական իրավունքների իրականացումը իր ազդեցությունն է ունենում ոչ միայն անհատի վրա, այն չափազանց կարևոր է նաև պետության կայուն զարգացման և սոցիալական գործընթացների համար: Մշակութային և սոցիալ-իրավական միջավայրը, որն ապահովում և խրախուսում է վերարտադրողական ծառայությունների և տեղեկատվության հավասար հասանելիությունը ինչպես տղամարդկանց, այնպես էլ

կանանց, ամուսնացած կամ չամուսնացած անձանց համար, չափազանց կարևոր նշանակություն ունի:

Բացի վերոնշյալից՝ ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն փաստով, որ աշխատանքը պարունակում է մարդու վերարտադրողական իրավունքների միջազգային-իրավական կարգավորման խորը ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպես նաև դրա շրջանակներում առկա տեսական և պրակտիկ խնդիրների բացահայտում, այնուհետ վերջիններիս լուծման մեխանիզմների ձևավորում:

**Ատենախոսության գիտական նորույթը** կայանում է նրանում, որ միջազգային իրավունքի դոկտրինում առաջին անգամ իրականացվել է մարդու վերարտադրողական իրավունքների՝ նոր կատեգորիայի հայեցակարգի և նորմատիվ բովանդակության համապարփակ համակարգային վերլուծություն: Համապարփակ միջազգային իրավական վերլուծության արդյունքում մարդու իրավունքների միջազգային իրավունքի գիտության մեջ ներմուծվում են նոր, փոխկապակցված հասկացություններ, որոնց առկայությունը պետություններին հնարավորություն կտա ամբողջությամբ իրականացնել վերարտադրողական իրավունքների վերաբերյալ իրենց միջազգային իրավական պարտավորությունները:

Հետազոտության գիտական նորույթն իր արտահայտությունն է գտնում նաև պաշտպանության ներկայացված հիմնական դրույթների տեսքով առաջադրված տեսական դրույթներում, գործնական հետևություններում և առաջարկներում:

Հետազոտության **տեսական նշանակությունը** կայանում է նրանում, որ հեղինակի կողմից իրականացված համապարփակ վերլուծությունը և դրա հիման վրա արված գիտական եզրակացությունները առանձնանում են մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն վերարտադրողական իրավունքների հայեցակարգային և նորմատիվ հիմքերի ուսումնասիրության հիմնարար մոտեցմամբ:

Ատենախոսության **գործնական նշանակությունը** կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են կիրառվել վերարտադրողական իրավունքների իրականացման վերաբերյալ ինչպես միջազգային պայմանագրերի, այնպես էլ ներպետական նորմատիվ-իրավական ակտերի պատրաստման և վերանայման

գործընթացում: Այս ուսումնասիրության դրույթները կարող են օգտագործվել նաև միջազգային և ազգային դատարանների իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև մարդու իրավունքների հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ:

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է երեք գլուխներից, որոնք ներառում են վեց ենթագլուխներ: Հարկ է նշել, որ հեղինակի կողմից մշակված ատենախոսության կառուցվածքը լավագույնս նպաստել է վերջինիս կողմից կատարված ամբողջական և բազմակողմանի վերլուծությունը և առաջ քաշած լուծումների ներկայացնել առավել պարզ և մատչելի լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ հեղինակի կողմից հրատարակված յոթ հոդվածները լիարժեքորեն արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության հեղինակը լիարժեքորեն օգտագործել է նորմատիվ նյութեր և տեսական-մասնագիտական գրականություն, հարուստ նախադեպային իրավունքի աղբյուրներ, ինչի շնորհիվ ատենախոսությունում ձևակերպված եզրահանգումները և առաջարկությունները ներկայանում են որպես կարևոր և հրատապ, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսության առաջին գլխում (էջ՝ 16-45) հեղինակը ուսումնասիրում է վերարտադրողական իրավունքների միջազգային իրավական բովանդակությունը և վերարտադրողական իրավունքները մարդու հիմնական իրավունքների համակարգում: Արդյունքում կատարվել է ԱՊՀ երկրների օրենսդրական կարգավորումների խորը ուսումնասիրություն:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ եվրոպական երկների օրենսդրական կարգավորումների ներառումը կնպաստեր ավելի համապարփակ գիտական արդյունքների, հետևաբար հեղինակի կողմից արված եզրակացությունները կդառնային առավել արժեքավոր:

2. Ատենախոսության երրորդ գլխի առաջին ենթագլխում (էջ՝ 100-126) հեղինակը ուսումնասիրում է վերարտադրողական իրավունքների իմպլեմենտացիայի խնդիրները: Մասնավորապես՝ ուսումնասիրության առարկա են

հանդիսացել սեռական կրթության իրավունքը, հակաբեղմնավորման հասանելիության իրավունքը և հղիության արհեստական ընդհատման իրավունքը: Հեղինակը կատարել է սեռական կրթության և հղիության արհեստական ընդհատման իրավունքների ՀՀ օրենսդրական վերլուծություն: Սակայն հակաբեղմնավորման հասանելիության իրավունքի ՀՀ օրենսդրական վերլուծություն չի կատարվել:

Մեր կարծիքով, ատենախոսությունը տեսականորեն առավել կշահեր, եթե հեղինակը նաև անդրադառնար, թե հակաբեղմնավորման հասանելիության իրավունքի ինչ իրավական կարգավորումներ են առկա ՀՀ օրենսդրությունում:

3. Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ ենթագլխում (էջ.՝ 126-145) *«հեղինակը մշակում է փոխնակ մայրության իրավունքի ըմբռնման նոր մոտեցում, որի նպատակն է պաշտպանել երկու տարբեր շահեր՝ որոնք համապատասխանաբար առաջացնում են երկու տարբեր պահանջներ. փոխնակ մայրության իրավունք՝ որպես ծննդաբերության իրավունք, և որպես վերարտադրողական ինքնավարության իրավունք»:*

Չնայած այն հանգամանքին, որ հեղինակը ատենախոսության 127-րդ էջում անդրադառնում է վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների միջազգային-իրավական կարգավորման անհրաժեշտությանը, կարծում ենք, որ աշխատանքը տեսականորեն առավել կշահեր, եթե ատենախոսը հիմնավորեր նաև փոխնակ մայրության միջազգային-իրավական կարգավորման նպատակահարմարությունը, քանի որ այժմ փոխնակ մայրության ինստիտուտի կարգավորումը գտնվում է ներպետական իրավական կարգավորման դաշտում:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մատնանշված նկատառումները, առաջարկություններն ու դիտողություններն ունեն մասնավոր և խորհրդատվական բնույթ և չեն կարող էականորեն ազդել Վ.Ա. Պետրոսյանի գիտական հետազոտության ընդհանուր դրական գնահատականի վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ՀՀ ԲԿԳԿ-ի սահմանված պահանջներին համապատասխան, իսկ Վ.Ա. Պետրոսյանի կողմից հրատարակված յոթ հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Վերոնիկա Արտաշեսի Պետրոսյանի «Մարդու վերարտադրողական իրավունքների իրացման միջազգային իրավական գործիքների և մեխանիզմների հիմնախնդիրները» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, գիտական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է միջազգային իրավունքի տեսության և պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ: Հետազոտության արդյունքները միջազգային իրավական գիտության ոլորտի համար ունեն մեծ նշանակություն:

Վերոգրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Վերոնիկա Արտաշեսի Պետրոսյանի «Մարդու վերարտադրողական իրավունքների իրացման միջազգային իրավական գործիքների և մեխանիզմների հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.06 – «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությանը քննարկվել և 2024 թվականի հունիսի 17-ին, դրվել է գրավոր քվեարկության հունիսի 18-ին և արժանացել է գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը:

«18» հունիսի 2024թ.

Երևանի պետական համալսարանի
Եվրոպական և միջազգային իրավունքի
ամբիոնի վարիչ ի.գ.թ., դոցենտ Ա. Ասատրյան